ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 15 » հոկտեմբեր 2025թ. No 6334 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 4625-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 5233-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/4800-25 առ 03.10.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4625-Ա հրամանի հավելվածի 25-րդ տողի 6-րդ սյունակի «Դր. Գուստավ Կլեյն ԳմբՀ և Քո. ԿԳ, Շտեյնենֆելդ 3, 77736 Զել ամ Հարմերսբախ» բառերը փոխարինել «Դր. Գուստավ Կլեյն ԳմբՀ և Քո. ԿԳ, Շտեյնենֆելդ 3, 77736 Զել ամ Հարմերսբախ- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, ԳԲԱ Ֆարմա ԳմբՀ, Էռնստ-Աբե փ. 40, Ուլմ, Բադեն-Վուրթեմբերգ, 89079, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական)» բառերով:

2. ՀՀ առողջապահության 2025 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 5233-Ա հրամանի հավելվածի 16-րդ տողի 4-րդ սյունակի «դեղափոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի» բառերը փոխարինել «դեղափոշի լիոֆիլացված արտաքին կիրառման լուծույթի» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից

տեղեկացնել ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

4. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

2) սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի գրանցման հավաստագրի տրամադրումը հայտատուին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157